Նոր Ազնաբերդ

Բնակչության թիվը՝ 161

Նոր Ազնաբերդը (նախկինում Գյուլիստան) կառուցվել է 1949 թվականին, բնակեցված է եղել ադրբեջանցիներով:

1988թ. հայ-ադրբեջանական դեպքերից հետո այն վերաբնակեցվել է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Ազնաբերդ գյուղից Հայաստան փախած հայերով:

Գյուղի ընդհանուր տարածքը կազմում է 1191 հա, ունի 44 բնակելի տուն և 169 բնակիչ:

Գյուղի միջով անցնում է Ջահուկ և Լվիս կոչվող գետակները: Գյուղը սահմանակից է Նախիջևանի Բզկով գյուղին, որի հետ ունի մոտ 5կմ սահման, սահմանակից է նաև մարզի Խնձորուտ և Սերս գյուղերին: Մարզկենտրոնից հեռու է 46կմ, ծովի մակերևույթից բարձր է 1630մ:

Գյուղը կրթական հաստատություն չունի, երեխաները հաճախում են հարևան Խնձորուտ գյուղի դպրոց: